

## ԶՈՒԱՐՁԱԼԻՔ

Ե Տ Ե Լ Ո Ր Դ Ա Պ Ա Ը Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հիները երազին մեծ յարգութիւն կու տային , և մասնաւոր այս բանիս համար երսելի էր Տրոփոնեայ արձանը , ուր որ կ'երթար երազատեսը իր երազին մեկնութիւնը առնելու : Ասանկ կը նկարագրէ Պաւսանիաս տեղւոյն արարողութիւնները . “ Երազին մեկնութիւնն ուղողը նախ քանի մը օր հանդիսա կ'առնուուր տաճարին մէջ . օրը երկու անդամ լուացուելով մեղացը թողութիւն կ'առնուուր . և այսպէս քուրմին վկայութեամբ բոլորվին մաքրուելին ետև կուռքին սկ խոյ մը զոհ կ'ընէր : Եաբը երկու տղաք երազախնդիրը կ'օծէին ձիթով , ու կ'առաջնորդէին անոր ու կը տանէին մինչև լեթէ գետին աղբիւրակին քով , ու այն ջրէն գաւաթմ մը իրեն կը խմցինեին , որ ամէն տեսակ աշխարհային խորհուրդներէ ազատ մնայ . նոյնպէս գաւաթմ մըն ալ Մնեմոսեան ջրէն կը խմէր , որպէս զի միտքը պատրաստուի պատահածները յիշելու համար : Անկէց եաբը քուրմերը կը բանային Տրիփոնեայ արձանը , որուն պէտք էր յարգութիւն տալ ու աղօթել . վերջը երազախնդիրը կտաւեայ զգեստով ծածկուած պատգամը լսելու կ'երթար : Արձանը լերան մը վրայ կանգնած էր . արձանին չորս կողմէ քարէ պատ քաշած էր , որուն ներսի դին խորունկ այր ( Տալարա ) մը կար . այս այրը կ'իջնեցուեր նեղ գոնէ մը , և այն գոնակէն մանելին ետքը խորտուքորա սանդուխներէ երբոր վար կ'իջնէր՝ թէ որ բաղդ ունենար առանց գլուխը սպատելու կամ մէկտեղը միասելու աղատիւ , անկէ ետև պիտի իջնէր նոյն կերպով երկրորդ ուրիշ այր մըն ալ , որն որ աւելինեղ և բոլորվին մութ էր . հոն սպիտակազգեստ երազախնդիրը գետնատարած կը պատկէր . բայց վար իջնելու ատին ձեռքը պիտի ունենար մասնաւոր եփած խիւս մը՝ ալիւրով , կաթով ու մեղով շինած : Այն այրին մէջ աեղը ծակ մը կար . ան ծակին բերանը պիտի երկնցընէր ոսքը . հոնկէց մէկէն այրի մը մէջ իջնած կը գտնէր ինքընքը նոր մորթած կենդանւոյ մը կաշին վրայ պառկած , որն որ քանի մը տեսակ գեղերով ծեփուած էր . այս գեղերուն զօրութիւնը միայն քուրմերը գիտէին : Հոն թմրելով կը սկսէր երազներ տեսնելու զարմանալի աեսիլքներու մէջ ընկղմիւ : Եւ այն երազներուն համեմատ քուրմերը ըլլալիքներուն մեկնութիւնը կու տային , :

Իպագոկրատ կըսէր թէ երազի գէշ ազդեցութենէ խալսելու համար թէ որ երազին մէջ աստղերը կը սկսին գեղնիւ , պէտք է երազով կըր շըան մը առած վազէ . երբոր լուսինը գեղնայ , պէտք է շիտակ վազել . իսկ թէ արևը , թէ կը և թէ երկայն վազել :

Գաղիանոս կ'ըսէր՝ թէ գեղին գալրւկ ունեցող ները կրակ ու բոց կ'երազեն , ու գալուկ ունեցող ները ծուխ և մժութիւն կ'երազեն , հազ ու հար բուխ ունեցողները ջուր ու թացութիւն կ'երազեն :

Արտեմիդորոս երսելի է երազահանութեան մէջ , և ընդարձակ գրուածք մը ունի երազներու վրայ , անոնց մեկնութիւնը տալով . օրինակի համար անոնցմէ քանի մը հոս յիշենք : Ով որ մահ երազէ , ըսել է թէ պիտի ամուսնանայ : Դաղիկ տեսնելը երազին մէջ բաղմութիւն զաւակաց կը նշանակէ . գանձ տեսնելը՝ նեղութեան նշան է : Երազի մէջ կուրնալ՝ զաւակաց կորուստ կը յայտնէ :

Ուրիշ մատենագիր մը կ'ըսէ . անուշեղին և աշքարեղին երազելը՝ գառնութիւն և ցաւ կը նշնէ : Արցունք երազելը ուրախութիւն կը յայտնէ . հազար ( Տարու ) երազով նշան է թէ պիտի փւանդանայ : Երազին մէջ հարստութիւնը գտնով՝ պիտի աղքատնայ : Եղեր են այնպիսի աւելորդա . պաշտ մարդիկներ , որ երազնուն մէջ բժիշկ տես . նելնուն համար կարծեր են թէ մեռնելու օրերնին հասեր է . ուստի մէկէն ելեր կտակնին ըրեր են իրենք զերենք հոգեվարքի մէջ կարծելով :

Հոս դնենք քանի մը երազներու աւելորդա . պաշտական մեկնութիւնները , որոնց ստութիւնը իմանալով զգուշանան ամենքը իրենց աեսած է . բաղներով գուշակութիւն ընելին :

Աւճունայ լրա . Եթէ երազին մէջ տեսնէ մէկ արծիւ մը որ կը թռչի , մեծ յաջողութեան սպասական անդամները , որոնց ստութիւնը վրայ իշնայ՝ անոր մեռնիլու կը նշանակէ :

Իւս լրա . Եթէ երազին մէջ էշը վազելու ըլլայ . գժբազդութեան պիտի հանդիպի : Հանդարտ որ կենայ . երազ տեսնովը չարութիւն պիտի ընէ . զուալու որ ըլլայ . աշխատանք ու անհանգստութիւն պիտի ունենայ :

Ծիածակի լրա . Ծիածանը թէ որ արեւելեան կողմը երկնայ , աղքատաց բազդի օրեր պիտի բացուին . թէ որ արևմտեան կողմը տեսնուի , հարուստներու յաջողութիւն պիտի ըլլայ :

Դրամ գունչալու լրա : Երազի մէջ գրամ գտնով կորուստ պիտի ունենայ և ցաւ պիտի քաշէ : Խոկ գրամ կորսունցնովը բազդի պիտի հանդիպի :

Բաղնիրի լրա . Մաքուր ջրոյ բաղնիք գացով երազին մէջ՝ առողջութիւն պիտի ունենայ . պոլտոր ջրոյ բաղնիք գացովը՝ աղդականաց ու բարեկամաց մահ պիտի տեսնէ :

ՎԵՆԵՑԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒԻ